



---

## **Ճանաչել միջմշակութային կոմպետենտությունը**

### **Ինչպես կարող եմ իմանալ, արդյոք ես ունեմ միջմշակութային կոմպետենտություն**

« Pestalozzi » ծրագիր  
Եվրոպական « Wergeland » կենտրոն  
« Միջմշակութային քաղաքներ » ծրագիր

#### **Ավելին իմանալու համար**

Council of Europe (2008), White paper on intercultural dialogue: “living together as equals in dignity”

UNESCO (2007), *UNESCO Guidelines on intercultural education*, Paris.

European Commission (2007) on a *European agenda for culture in a globalizing world* (Communication from the commission to the European Parliament, the Council, the European Economic and Social Committee and the Committee of the Regions)

## **Ինչպես կարող եմ իմանալ, արդյոք ես ունեմ միջմշակութային կոմպետենտություն**

Վերջին տասնամյակների ընթացքում, լայնորեն ընդունված է, որ միջմշակութային կոմպետենտությունը անհրաժեշտ է բազմազանության աշխարհում խաղաղ գոյակցության համար: Սա շատ հստակ արտահայտված է միջազգային կազմակերպությունների բազմաթիվ քաղաքական փաստաթղթերում և առաջարկություններում, ինչպիսիք են White Paper-ը միջմշակութային երկխոսության մասին (Եվրոպայի խորհուրդ, 2008) : Մեզանից յուրաքանչյուրը պետք է բարելավի իր միջմշակութային կարողությունները, որպեսզի նպաստենք ժողովրդավարական հասարակությունների զարգացմանը և կենսունակությանը : Այս տարբերակը, որ մենք առաջարկում ենք, մշակվել է, որպեսզի ձեզ օգնի կողմնորոշվել բազմազանության համատեքստում :

Ստորև ընդգրկված են միջմշակութային գիտելիքների հիմնական տարրերը՝ վերաբերմունքը, հմտությունները և գիտելիքները : Այս տարրերը ներկայացված են առաջին անձին՝ հայտարարությունների տեսքով, նկարագրելով վարքագծեր, որոնք կարող են կապված լինել որոշակի ոլորտների հետ : Բնականաբար, այս երեք տարրերը սերտորեն կապված են, քանի որ մեր գիտելիքները աշխարհի և սոցիալական փոխազդեցությունների մասին, ինչպես նաև մեր դիրքորոշումները դրանց նկատմամբ տեսանելի են դառնում միայն մեր վարքագծից : Բացի այդ, մեր վերաբերմունքի զարգացումը և գիտելիքների ձեռքբերումը կարող են թույլ տալ բարձրացնել մեր միջմշակութային հմտությունները, միայն այն դեպքում, եթե մենք ընտրենք ճիշտ վերաբերմունք և պատշաճ ձևով օգտագործենք այդ գիտելիքները և հմտությունները: Վերաբերմունքի կարևորության պատճառով է, որ մեր ցուցանիշների ցուցակը առաջարկում է ավելի շատ ոլորտներ վերաբերմունքը, քան հմտությունները և գիտելիքները ուսումնասիրելու համար:

Այս ցուցակը մշակվել է ամբողջ Եվրոպայի ուսուցիչների, հաստատությունների տնօրենների եւ փորձագետների 30 հոգանոց մի խմբի կողմից, մի եռօրյա սեմինարի ժամանակ: Մասնակիցները հիմնվել են սեփական փորձի, ինչպես նաև Եվրոպայի խորհրդի և այլ միջազգային կազմակերպությունների շրջանակներում վերջերս իրագործած ուսումնասիրությունների և ծրագրերի արդյունքների վրա: Այս նախաձեռնությունը համատեղ կազմակերպվել է Pestalozzi, Եվրոպայի խորհրդի միջմշակութային քաղաքներ և Եվրոպական Wergeland կենտրոնի ծրագրի կողմից: Այս ցուցակը ներկայացվել է 14 երկրների 50 ուսուցիչների և հաստատությունների տնօրենների գնահատմանը : Վերջնական տարբերակը ներառում է այս փորձարկման փուլում ստացած բազմաթիվ մեկնաբանություններ :

Ինչպես իմանալ, արդյոք դուք ունեք միջմշակութային կոմպետենտություն: Այս միջոցը մշակվել է որպեսզի ձեզ օգնի քննադատորեն նայել ձեր միջմշակութային գիտելիքներին և բացահայտել ձեր ուժեղ կողմերը և այն ոլորտները որոնք պետք է բարելավվել: Երբ դուք կունենաք 20 կամ 30 րոպե, նստեք հարմարավետ և մտածեք այս ցուցակում նկարագրված վարքագծի մասին: Պատկերացրեք ձեզ՝ շրջապատված մոտ անձանցով կամ անձանոթներով, տարբեր ծագումով մարդկանցով (սոցիալ - մշակութային, աշխարհագրական, սոցիալ - տնտեսական կամ լեզվային): Հիշեք ձեր միջմշակութային հանդիպումները կամ ցանկացած իրավիճակ, որտեղ դուք այլ մարդկանց հետ էիք: Փորձեք հիշել ձեր տպավորությունները, ձեր գիտելիքները և ձեր գործողությունները այդ ժամանակ, այնուհետև նշեք ամեն տրված հարցի դիմաց ձեր ընտրած տարբերակը: Դուք կարող եք լրացնել միայնակ կամ խմբով (օրինակ կոլեգաների հետ) : Երբ դուք ավարտեք, հետաքրքիր կլինի մտածել, թե ինչ միջոցներով եք դուք ձեզ բարելավելու: Հետագայում, դուք կարող եք կրկին լրացնել ցանկը մասամբ կամ ամբողջությամբ, որպեսզի որոշեք, թե ինչ է փոխվել :

Հուսով ենք, որ այս միջոցը կոգնորի և օգտակար կլինի կրթական փորձին:

# Վերաբերմունք

1-Երբեք	2-Հազվադեպ	3-Երբեմն	4-Հաճախ	5-Միշտ
<b>1. Հարգանք</b>				
Ես վերաբերվում եմ ուրներին հարգանքով և որպես ինձ հավասարի				
Ես թույլ եմ տալիս ուրիշներին արտահայտվել, ես լսում եմ նրանց, ես արձագանքում եմ նրանց ասածներին				
Ես չեմ դատում առաջին տպավորությամբ				

<b>2. Հանդուրժողականություն կասկած հարուցողի հանդեպ</b>				
Ես համաձայնվում եմ ժամանակավորապես մի կողմ թողնել իմ արժեքները և սկզբունքներին				
Ես համբերատար եմ, երբ բախվում եմ անհայտ իրավիճակի				
Ես գործում եմ դրական կերպով՝ առանց համոզված լինելու, թե այլ մարդից ինչ են մտածում և զգում				
Ես հասկանում եմ, որ իմ մտածելակերպի և գործելակերպի վրա ազդում են մի շարք արժեքներ և սկզբունքներ				

<b>3. Լայնամտությունը և հետաքրքրությունը</b>				
Ես դրսևորում եմ բարյացակամ հետաքրքրություն ինձ հանդիպող իրավիճակների և մարդկանց հանդեպ				
Ես օգտվում եմ առիթից որպեսզի ձեռք բերեմ նոր ծանոթություններ				
Ես տեղեկանում եմ այլոց կարծիքների և գործողությունների մասին				

<b>4. Կարեկցում</b>				
Ես փորձում եմ ուշադրություն դարձնել ուրիշների զգայունությանը				
Ես ցույց եմ տալիս, որ կարող եմ կիսել այլոց զգացմունքները				

<b>5. Ինքնակառավարում</b>				
Ես անկաշկանդ եմ իմ ուժեղ և թույլ կողմերը նկարագրելու հարմար				
Ես ընդունում եմ, որ կարող եմ սխալվել				
Ես ընդունում եմ իմ սխալները				
Ես ուրիշներից օգնություն եմ խնդրում, երբ դրա կարիքը ունեմ				
Հարկ եղած դեպքում ես հարմարեցնում եմ իմ պահվածքը				

<b>6. Ինքնավստահություն հակասական իրավիճակում</b>				
Ես չեմ վախենում ցույց տալ իմ անհամաձայնությունը				
Ես առաջարկում եմ այլ կերպ տեսնել կամ իրականացնել ինչ որ գործողություններ				
Ես ընդունում եմ, որ ինձ կարող են հակասել				

## ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1-Երբեք	2-Հազվադեպ	3-Երբեմն	4-Հաճախ	5-Միշտ
<b>1. Փոխգործակցություն</b>				
Ես ուշադիր լսում եմ ուրիշներին				
Ես հետևում եմ, որ իմ խոսքերը հասկացվեն այնպես ինչպես ես եմ մտածում				
Ես կոչ եմ անում ուրիշներին արտահայտել իրենց կարիքներն ու կարծիքները				
Ես մտահոգությամբ եմ արձագանքում իմ շուրջ արտահայտված զգացմունքներին:				
Ես նկատում եմ ընդհանուր ակնկալիքներն ու կարիքները և արտահայտում եմ դրանք				

<b>2. Գերհեռանկար</b>				
Ես տեղեկություններ եմ փնտրում տարբեր աղբյուրներից				
Ես բացատրում եմ իմ մտքերն ու գործողությունները՝ հաշվի առնելով արտաքին հայացքները				
Ես արտահայտում եմ իմ կարծիքը լրացուցիչ կամ տարամետ կարծիքների տեսանկյունից				
Ես օգտագործում եմ իմ երևակայությունը նոր հեռանկարներ առաջարկելու համար				

Ես հասկանում եմ, որ աշխարհայացքը և հավատքը անփոփոխ չեն				
Ես հասկանում եմ, որ աշխարհայացքը և հավատքը ազդում են անձի կամ խմբի ինքնության վրա, սակայն դա բավարար չէ ինքնությունը սահմանելու համար				

**Իսկ հիմա, որտեղ եմ ես կանգնած, որ ուղին բռնել**

1-Երբեք 2-Հազվադեպ 3-Երբեմն 4-Հաճախ 5-Միշտ	1	2	3	4	5
<b>3. Քննադատական մտածողություն</b>					
Ես օգտագործում եմ իմ վերլուծության կարողությունը և հասանելի բոլոր տեղեկությունները իմ մեկնաբանությունները ստուգելու համար					
Ես քննարկման եմ դնում ուրիշների, նույնիսկ հեղինակավոր գործիչների կամ աղբյուրների մեկնաբանությունները					
Ես առաջարկում եմ մեկնաբանություններ, որոնք տարաբնույթ են մյուսների ասածներից և արածներից					
Ես տալիս եմ հստակ փաստարկներ իմ մտքերը և ընտրությունները բացատրելու համար:					

<b>4. Խնդիրների լուծում և համագործակցություն</b>					
Ես բացահայտում եմ այն խնդիրները, որոնք պետք է լուծվեն					
Ես առաջարկում եմ տարբեր տեսակետներ այն խնդրի համար, որը պետք է լուծվի					
Ես նախաձեռնում եմ, որպեսզի լուծեմ խնդիրը					
Ես աջակցում եմ նրանց, ովքեր փորձում են լուծել խնդիրը :					
Ես ակտիվորեն լուծում եմ փնտրում մյուս ներգրավված մարդկանց հետ					
Ես հուսադրող վերաբերմունք եմ ցուցադրում, երբ խումբը կանգնած է ինչ որ խնդրի առաջ					

<b>5. Աճի ունակություն</b>					
Ես ուսումնասիրում եմ նոր բաներ, նոր իրավիճակներ					
Ես հարցականի տակ եմ դնում և վերլուծում եմ իմ դրդապատճառները, իմ կարիքները և նպատակները.					
Ես փոխում եմ իմ գործելաճճը՝ հաշվի առնելով նոր հեռանկարները					

## Գիտելիքներ

1-Երբեք 2-Հազվադեպ 3-Երբեմն 4-Հաճախ 5-Միշտ	1	2	3	4	5
<b>1 Գիտելիքներ փոխազդեցության գործընթացի մասին</b>					
Ես հաշվի եմ առնում բանավոր և ոչ բանավոր հաղորդագրությունները					
Ես հասկանում եմ, որ խոսքերն ու մարմնի լեզուն կախված համատեքստից կարող են ունենալ տարբեր իմաստներ					
Ես ճշգրտում եմ իմաստները՝ թյուրիմացություններից խուսափելու համար					
Ես քննարկում եմ այն ազդեցությունը, որը փոխազդեցության մի իրավիճակում գործադրում է իշխանական հարաբերությունները					
Ես հասկանում եմ, որ փոխազդեցության յուրաքանչյուր ձևը բնութագրվում է տարբեր կանոններով և նպատակներով					

<b>2. Գիտելիքներ սոցիալական գործելակերպի մասին</b>					
Ես հասկանում եմ, որ ուրիշները կարող են մտածել, վարվել և զգալ այլ կերպ					
Ես ուսումնասիրում եմ այն պատճառները, որոնք տարբեր փորձերի և արձագանքների ծագում ունեն					

<b>3. Գիտելիքներ քաղաքական և հասարակական գործիչների դերի վերաբերյալ (անհատներ կամ հաստատություններ)</b>					
Ես համաձայն եմ, որ բազմազանության գաղափարը ունի քաղաքական և հասարակական մասշտաբներ					
Ես դիմում եմ քաղաքական, սոցիալական կամ մշակութային իրազեկ դերակատարներին, երբ ինձ պետք են տեղեկություններ կամ օժանդակություն					
Խնդիրների դեպքում ես ձեռնարկում եմ իմ քայլերը իրազեկ քաղաքական և սոցիալական գործիչների խմբի հետ :					

<b>4. Գիտելիքներ աշխարհայացքի և հավատքի վերաբերյալ</b>					
Ես գիտակցում եմ, որ հոգևոր ու գոյատևման հարցերը կյանքի կարևոր ասպեկտներն են					
Ես գիտակցում եմ, որ փոխգործակցության իրավիճակներում, աշխարհայացքի և հավատքի միջև գոյություն ունեն տարբերություններ					
Ես ակտիվորեն տեղեկանում եմ այլ աշխարհայացքի և հավատքի մասին					